ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռ. Գալոյան

27 ապրիլի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

Արմինե Վարդանի Գևորգյանի «Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը. 00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Մակրոէկոնոմիկայի ամբիոնի 25 ապրիլի 2023թ-ի N 11 նիստում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներդրումների ներգրավումը հետպատերազմական Հայաստանում ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են տնտեսական, իրավական և քաղաքական հարթություններում: Հատկանշական է, որ այդպիսի խնդիրներ ի հայտ են եկել հետխորհրդային ամբողջ ժամանակահատվածում, քանի որ պատերազմական իրավիճակներ եղել են ոչ մեծ պարբերականությամբ: Հեղինակն այդ խնդիրները ներկայացրել է նաև ՀՀ և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև ձևավորված տնտեսական հարաբերությունների խզմամբ: Բացի այդ, հետխորհրդային Հայաստանում մեծ թափով տեղի ունեցավ պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթաց, որը նույնպես առաջ բերեց ներդրումների ներգրավման հետ կապված խնդիրներ՝ հանգեցնելով հետպատերազմական ժամանակաշրջանի հետ կապված նոր ուսումնասիրությունների:

Հեղինակն աշխատանքի արդիականության հիմնավորման շրջանակում անդրադարձել է զարգացող և զարգացած երկրների արտաքին տնտեսական

հարաբերությունների հիմնախնդիրների հետպատերազմական իրավիճակներին, դրանց համատեքստում կենտրոնանալով ներդրումների ներգրավման դրական և բացասական կողմերին:

Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների շրջանակը թեմայի արդիականության հիմնավորման առումով ընդգրկում է նաև ֆինանսաբանկային ոլորտը, որտեղ հեղինակն իր դիտարկումներն է ներկայացրել պետական բանկերի բացակայության, ներքին ֆինանսական ռեսուրսների անբավարարության, արտաքին ֆինանսական աղբյուրների ոչ հուսալի հանգամանքների տեսանկյունից:

Աշխատանքի բաղկացուցիչ մասերից է ռազմական իրավիճակների պայմաններում օտարերկրյա ներդրումների ներգրավման միջազգային փորձի ուսումնասիրությունը և դրանց տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում, որը հատկապես կարևորվել է տնտեսության իրական հատվածի համար:

Հեղինակը թեմայի արդիականությունը հիմնավորել է նաև ՀՀ գյուղերի և գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտության, արդյունաբերության ցածր մակարդակի, և ՀՆԱ-ի հիմնական մաս կազմող ծառայությունների ոլորտի համատեքստում:

Վերոնշյալ հարցերին վերաբերող քննարկումները ներկայացված են Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Արմինե Վարդանի Գևորգյանի ատենախոսության մեջ, որով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության մեջ նպատակ է դրվել վերլուծել ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմական Հայաստանում և առաջարկել ՀՀ ներդրումային գրավչության աճին ուղղված քայլեր՝ ինչպես ներդրումային գրավչություն

ունեցող ոլորտների բացահայտման, այնպես էլ ներդրումային քաղաքականության գործիքակազմի մշակման միջոցով:

Այդ նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Քննարկել ներդրումների ներգրավման հիմնական տեսությունները՝ ներկայացնելով դրանց օրինաչափություններն ու բացթողումները:
- Մասնագիտական գրականության և տարբեր հեղինակների կողմից կատարված հետազոտությունների համադրման արդյունքում վեր հանել ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ներգրավման վրա ազդող հիմնական գործոնները:
- Բացահայտված գործոնների միջոցով համեմատական վերլուծություն իրականացնել Հայաստանի, հարևան և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրի համար՝ բացահայտելով ՀՀ ներդրումային դաշտի թերությունները:
- Քննական վերլուծության ենթարկել ՀՀ ՕՈՒՆ դինամիկան և կառուցվածքը՝ բացահայտելով առկա խնդիրները:
- Էկոնոմետրիկ գործիքակազմի միջոցով հաշվարկել ՕՈՒՆ ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա և պարզել ՕՈՒՆ և ՀՆԱ միջև պատճառական կապի առկայությունը կամ բացակայությունը:
- Բացահայտել ՀՀ տնտեսության ներդրումային գրավչություն ունեցող ոլորտները՝ փաստաթղթային ստուգման և տարբեր ինդեքսների հաշվարկման հիման վրա:
- Վերլուծել ՀՀ-ում վարվող ներդրումային քաղաքականությունը՝ վեր հանելով դրանում առկա սխալներն ու բացթողումները:
- Մշակել հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավմանն ուղղված ռազմավարական քայլերի համախումբ, որը կներառի մինչ այդ արձանագրված խնդիրների լուծման գործիքակազմ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում ստացվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

1. Բազմագործոն ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունում ՕՈՒՆ-երի ազդեցության գործակիցը ՀՆԱ-ի աճի ձեռքբերման գործում, ինչպես նաև ցույց է տրվել ՕՈՒՆ-երի և ՀՀ ՀՆԱ-ի միջև առկա պատճառական կապը: Ըստ այդմ՝ տվյալ ժամանակահատվածում ՕՈՒՆ ներհոսքի փոփոխությունը պատճառ է հանդիսանում հետագա 6 ամիսների ընթացքում ՀՆԱ-ի փոփոխության, իսկ տվյալ ժամանակահատվածում ՕՈՒՆ միավոր աճը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճին 1,56 միավորով:
2. Մշակվել են հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլեր, որոնք բաղկացած էին 3 համախմբից՝ 1. մեթոդական գործիքակազմ, որը պետք է հաշվի առնվի ՀՀ ներդրումների ներգրավման ռազմավարություն մշակելիս, 2. ներկայում ՀՀ-ում ներդրումային քաղաքականության իրականացման ընթացքում թույլ տված սխալների և թերացումների շտկմանն ուղղված գործիքակազմ, 3. մասնագիտական գրականության և տարբեր հեղինակների կողմից կատարված վերլուծությունների համադրման արդյունքում վեր հանված ներդրումային գրավչության վրա ազդող 30 գործոններից բաղկացած համախմբի այն գործոնների մտկմանն ուղղված գործիքակազմ, որոնց մասով Հայաստանը զիջում էր հարևան և ԵԱՏՄ երկրներին:
3. Բացահայտվել են ՀՀ-ում ներդրումային գրավչության և ներդրումային ներուժ ունեցող ոլորտները՝ 4 մեթոդաբանությունների համադրման հիման վրա՝ փաստաթղթային վերլուծություն, պետական կառավարման համակարգում անցկացված սոցիոլոգիական հարցումներ, արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ոլորտների բացահայտում և ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի համեմատական վերլուծություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում ստացվել են ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող դրույթներ: Ատենախոսության տեսական հիմնադրույթները կարող են կիրառվել այլ հետազոտողների կողմից, ինչպես նաև օգտագործվել ներդրումների ներգրավման առարկայական ծրագրում, իսկ կիրառական նշանակության դրույթների հասցեատերը հիմնականում ՀՀ կառավարությունն է: Մշակված գործիքակազմը կարող է նպաստել Հայաստանում վարվող ներդրումային քաղաքականության բարելավմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն շարադրված է 125 մեքենագիր էջի վրա՝ առանց հավելվածի, պարունակում է 36 գծապատկեր, 20 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի առաջին՝ «Ներդրումների ներգրավման տեսական հիմնադրույթները» գլխում հեղինակն անդրադարձել է ներդրումների ներգրավման հիմնական տեսություններին և դրանց վրա ազդող գործոններին: Կատարվել են էմպիրիկ վերլուծություններ, իսկ ներդրումային միջավայրի վրա ազդեցությունը ներկայացվել է ինստիտուցիոնալ, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական գործոնների տեսքով:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ ներդրումների ներգրավման հիմնախնդիրները» գլխում ներկայացվել է ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքը և ազդեցությունը ՀՆԱ-ի վրա, ինչպես

նաև կատարվել է ՀՀ ներդրումային միջավայրի համեմատական վերլուծություն: Համաձայն աշխատանքի մեջ կատարված վերլուծության, տնտեսական ցուցանիշներից ներդրումների ներգրավման վրա դրական են ազդում ՀՆԱ-ի աճը, ՀՆԱ-ի դեֆլյատորը, մյուս գործոնների ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի չի եղել: Իսկ սոցիալ-ժողովրդագրական գործոններից գործազրկության աճը բացասաբար է ազդել ներդրումների ներհոսքի վրա:

Հետազոտության երրորդ՝ «Ներդրումների ներգրավման հնարավորությունները հետպատերազմյան Հայաստանում» գլխում իրականացված հիմնական աշխատանքները վերաբերել են ՀՀ-ում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտմանը և ՀՀ ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլերին: Դրանց համաձայն ատենախոսը հիմնավորել է ներդրումային գրավչություն ունեցող այն ոլորտների առկայությունը, որոնք ընկալելի կլինեն առաջիկա տարիներին, բացի այդ, բացահայտվել է նաև արտաքին շուկաներում համեմատական կամ մրցակցային առավելություն ունեցող ոլորտները:

Աշխատանքի «Եզրակացություն» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական եզրահանգումները, որոնք բխում են կատարված ուսումնասիրություններից և իրականացված վերլուծություններից:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության մեջ կան որոշակի թերություններ, որոնք հրավիրում ենք հեղինակի ուշադրությանը:

1. Հեղինակը մշակել է էկոնոմետրիկ մոդելներ, որոնց միջոցով գնահատել է ՕՈՒՆ–երի աճի տեմպի, արտահանման աճի տեմպի, ներմուծման աճի տեմպի ազդեցությունները ՀՀ ՀՆԱ–ի(անվանական)աճի տեմպի վրա: Օգտագործվել են 2010-2021թթ.եռամսյակային շարքեր: Կարծում ենք, որ ՀՀ ՀՆԱ–ի աճի վրա ազդեցության գործակիցներն ավելի ստույգ կստացվեին, եթե հեղինակը վերցներ

տվյալների ավելի մեծ բազա: ՕՈՒՆ-երի (զուտ պարտավորությունների ստանձնում), ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման վերաբերյալ ՀՀ վճարային հաշվեկշիռ 6-ում (որին հեղինակը հղում կատարել է) շարքերն 1995թ-ից առկա են: Եռամսյակային տվյալների ավելի երկար շարքերը հնարավորություն կտային գնահատումներ կատարել ՀՀ տնտեսության համար նշանակալի ներքին և արտաքին շոկերի պայմաններում:

2. Ցանկալի կլիներ, որ հեղինակը գնահատեր նաև համախառն ներքին ներդրումների (համախառն կուտակում) աճի տեմպի ազդեցությունը ՀՀ իրական ՀՆԱ-ի աճի տեմպի վրա:
3. Հեղինակը կատարում է ՀՀ ներդրումային գրավչության համեմատական վերլուծություն և բացահայտում է, որ և՛ հարևան երկրների, և՛ ԵԱՏՄ անդամ երկրների համեմատությամբ ՀՀ տնտեսությունը օտարերկրյա ներդրողների համար քիչ գրավիչ է: Մյուս կողմից էլ հեղինակի կողմից կատարված տնտեսաչափական գնահատման արդյունքները վկայում են, որ արտահանման աճի տեմպը մեծ ազդեցություն ունի ՀՀ ՀՆԱ աճի տեմպի վրա: Միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ մի շարք հետպատերազմյան երկրների (Գերմանիա, Ճապոնիա) տնտեսական հրաշքի մաս են կազմել արտահանման աճին, ներմուծման փոխարինմանը միտված ներդրումային քաղաքականությունները: Ցանկալի կլիներ, որ հեղինակն ուսումնասիրեր առաջիկա 10 տարիների կտրվածքով ՀՀ-ում բացահայտված ներդրումային գրավչություն և ներուժ ունեցող ոլորտներում կառավարության խթանող ներդրումային քաղաքականության միջոցառումները՝ հարկային արձակուրդների, հարկային վարկի տրամադրման շրջանակներում, և հանդես գար առաջարկություններով:
4. Առաջին գիտական նորույթի հիմնավորումները թույլ են, քանի որ հեղինակը ներկայացրել է պարզապես ռեգրեսիոն հավասարում՝ որպես վերլուծական գործիք, որով փորձել է ցույց տալ ներդրումների և ՀՆԱ-ի միջև կապը:

5. Երկրորդ գիտական նորույթն ավելի շատ նման է առաջարկության և կարիք ունի խմբագրման՝ որպես նորույթ դիտարկվելու նպատակով: Այսինքն ռազմավարական քայլերը որպես նորույթ կարելի է համարել շատ ավելի խոր գիտավերլուծական հիմնավորումների պարագայում:
6. Աշխատանքի մեջ առկա են նաև տեխնիկական թերություններ: Մասնավորապես, կան տառասխալներ էջ 43-ում, 45-ում, կրկնվող բառեր էջ 70-ում և այլն: Տիտղոսաթերթի վրա գրված է Երևան 2022: Նոր պարբերություն սկսելու սկզբունքները տարբեր էջերում տարբեր են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողություններն էական բացասական ազդեցություն չունեն հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակության վրա:

Արմինե Վարդանի Գևորգյանի «Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը ՀՀ ներդրումային քաղաքականության ու այդ ոլորտում իրականացվող միջոցառումների համատեքստում ունեն խթանիչ դեր:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և արտացոլում է հետազոտության կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Արմինե Վարդանի Գևորգյանի «Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտականի շնորհմանը:

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ՝ **Սոս Խաչիկյան**

Մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ռուբեն Ղանթարչյան**

Մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վարսիկ Տիգրանյան**

Ստորագրությունները հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն. Ղարբինյան**

27.0